



Գործադիր ամփոփում

Վերջերս, Երեխաների մտավոր զարգացման հարցերով գբաղվող գիտական մի առաջատար հաստատություն գգուշացրել է սնդիկի ցածր մակարդակների պատճառով «ուղեղի քիմիական ցամաքման» մասին։ Հարվարդի և Հարավային Դանիայի համալսարանների պրոֆեսոր Ֆիլիա Գրանդչինն այն կարծիքին է, որ մեր հասարակությունը կորցնում է իր ինտելեկտը։ Մարդկանց մտավոր զարգացման գործակիցները գնալով նվազում են քիմիական ազդեցության հետևանքով։ Ուղեղին հասցվող վնասը, որի մեծ մասը նյարդաբանական տեսակետից անդառնալի է, առաջանում է պտղի զարգացման վաղ շրջանում մերիլ սնդիկի, ինչպես նաև այլ թունավոր նյութերի ազդեցության հետևանքով։ Այս թունավոր նյութերը վնասում են ուղեղը սնդիկի նույնիսկ այնպիսի մակարդաչափերի դեպքում, որոնք նախկինում ընդունված չափերի համեմատ շատ ավելի ցածր են, դրանք շատ ավելի փոքր են, քան այն քանակությունները, որոնք ազդում են չափահասների ուղեղի ֆունկցիայի վրա, և շատ ավելի ցածր են, քան այն մակարդաչափերը, որոնցով պայմանավորված են եղել վերջերս գրանցված սնդիկային սուր թունավորումները։

Բնակչության ամենից խոցելի խմբերը նորածիններն են, մանկահասակ երեխաները և հղի կանայք։ Հաճախ հղի կանայք, անտեղյակ լինելով սնդիկի հիմնախնդրից և սնդիկի ազդեցության աղբյուրներից, չինանալով, որ սնդիկը խիստ թունավոր է ուղեղի զարգացման համար և որ այն կուտակվում է մարդու օրգանիզմում և փոխանցվում պտղին հղիության ընթացքում, իրենց պտղին ենթարկում են լուրջ նյարդաբանական խախտումների վտանգին։ Սնդիկը խիստ թունավոր է, հատկապես, եթե այն փոխակերպվում է մերիլ սնդիկի, որը կուտակվում է ծկան օրգանիզմում, մտնում սննդային շղթա և վտանգում այն մարդկանց առողջությունը, ովքեր կանոնավորապես սնվում են ծկնեղենով։ Սնդիկի ազդեցության հիմնական աղբյուրներն են՝ ծկան, հատկապես որոշակի տեսակի ծկների օգտագործումը (որոնք ամենաբարձր դիրքն են գրավում սննդային շղթայում), աշխատավայրում սնդիկի հետ շփումը, նաև արդյունաբերական աղբյուրները։

Զանալով լուծել առողջապահական այս հիմնախնդիրը, կառավարությունները և միջազգային մարմինները սահմանել են հանձնարարականներ՝ սնդիկի անվտանգ մակարդակների վերաբերյալ, նպատակ ունենալով պաշտպանել մարդկանց առողջությունը։ Միևնույն ժամանակ, դեռևս պարզ չէ, թե սնդիկի որ մակարդակների դեպքում պտղի ուղեղը գերծ կմնա թունավոր ազդեցությունից։ Անվտանգ մակարդակների մասին գիտնականների գնահատականները մշտապես ճշտվում են՝ հակված լինելով ընդունելու ավելի ցածր մակարդակները։ Որոշ գիտնականներ գտնում են, որ մարդու օրգանիզմում սնդիկի ոչ մի մակարդակ չի կարող համարվել անվտանգ։ Ահա թե ինչու, սնդիկի ազդեցության մակարդակները մեծ անհանգստություն են

առաջացնում թե Եվրոպական Երկրներում, թե Եվրոպայի սահմաններից դուրս:
Աշխարհի բնակչության մեջ մասը կանոնավորապես սնվում է ձկնեղենով, բայց
մինչև հիմա ոչ մի որոշմամբ չի կրծատվել վտանգն ապագա սերունդների
առողջության համար:

Անցյալ տարի «Առողջապահությունն առանց վտանգ պատճառելու» և
«Առողջության և շրջակա միջավայրի միությունը» նախաձեռնել էին
քարոզարշավ՝ ուղղված «ուղեղի ցամաքման» մասին իրազեկության
բարձրացմանը և առողջապահության մասնագետների մորիլիզացմանը, որպեսզի
նրանք հանդես գան Եվրոպի առողջության Երկրներում և ողջ աշխարհում սնդիկային
աղտոտվածության անհապաղ կրծատման օգտին: «Մնացեք առողջ,
դադարեցրեք սնդիկի օգտագործումը» քարոզարշավի շրջանակներում
իրականացրել ենք 21 Երկրների շուրջ 250 կանանց մագերում սնդիկի
մակարդակների ցուցադրական (իյուստրատիվ) հետազոտություն:
Հետազոտված 95%-ից ավել կանանց մոտ հայտնաբերվել են սնդիկի նկատելի
մակարդակներ: Սնդիկի չափաքանակները, որոնք մարդիկ ուղղակիորեն
ընդունում են (կուլ են տալիս), հաճախ որոշվում են մագերում հայտնաբերված
մակարդակներով, և, հետևաբար, համարում են, որ «մագերում պարունակվող
մակարդակները» համապատասխանում են այսպես կոչված «ընդունած
չափաքանակին»: 15% կանանց մոտ դրանք բարձր են եղել 1 մկգ/գ սահմանային
քանակությունից, որն ընդունվել է Միացյալ Նահանգների Ազգային
հետազոտական ինստիտուտի կողմից: Դա այն մակարդակն է, որը չպետք է
գերազանցվի Վերարտադրողական տարիքի կանանց մոտ: Այնուամենայնիվ,
բոլոր կանանց մոտ սննդիկի մակարդակները ցածր են եղել 10 մկգ/գ -ից, որը
որպես սահմանային չափաքանակ ընդունել է Առողջապահության
համաշխարհային կազմակերպությունը 1990 թ-ին: Սա այն մակարդակն է, որի
առկայությունը պարզորոշ վկայում է նյարդային համակարգի կրծած
ազդեցությունների մասին: Մեր հետազոտությունը վկայում է այն մասին, որ
գոյություն ունի կապ ձկնեղենի օգտագործման և սնդիկի ավելացող
մակարդակների միջև:

Ամիատի մակարդակում սնդիկի ցածր չափաքանակների ներկայացրած
վտանգը կարող է պակաս տագնապալի լինել, քանի որ մոր օրգանիզմում սնդիկի
ածող մակարդակը չի կարող ինքնաբերաբար առաջացնել երեխայի ուղեղի
վնասում, և ազդեցության հետևանքները կարող են չնկատվել: Ինչեւ, հղի
կանանց մոտ լայն տարածում գտած սնդիկի ցածր մակարդակների
հետևանքները մեր հասարակության համար կարող են ծանր լինել: Սնդիկով
աղտոտվածության պատճառով վտանգված են ներկա և ապագա սերունդների
երեխաների ինտելեկտը, սովորելու կարողությունները, զգայական
համակարգերը և նրանց նորմալ զարգացումը:

Չաստ դժվար, բայց նաև անհրաժեշտ է, որպեսզի հասարակական
առողջապահության աշխատակիցները և հասարակական որոշումներ
կայացնողները լրջորեն ընդունեն սնդիկային աղտոտվածության հիմնախնդիրը:
Քանի որ սնդիկը գլոբալ աղտոտիչ է և չի ճանաչում ազգային կամ
տարածաշրջանային սահմաններ, սնդիկի արտանետումն աշխարհի որևէ մասում
կարող է նպաստել «ուղեղի քիմիական ցամաքման» մոլորակի մեկ այլ մասում:
Վերջին հաշվով, անհրաժեշտ է ձեռնարկել համընդհանուր գործողություններ
սնդիկի նպատակային օգտագործումը և դրա հետևանքով գոյացող
արտանետումները վերացնելու, ոչ դիտավորյալ արտանետումները կրծատելու

համար սնդիկի այնպիսի հիմնական աղբյուրներից, ինչպիսիք են՝ աղբայրիչ գործարանները, ածխով աշխատող շարժիչները, ցեմենտի վառարանները: Սնդիկին փոխարինող արտադրանքները և տեխնոլոգիաները մատչելի են և կարող են կանխել սնդիկի արտանետումները: Այս ամենին պետք է հետևողականորեն նախանձախնդիր լինեն թե կառավարական, թե հասարակական մակարդակներում: Այնուամենայնիվ, եթե նույնիսկ անմիջապես դադարեցվեն սնդիկի բոլոր գործածությունները, շրջակա միջավայրում և սննդային շղթայում արդեն առկա սնդիկը կշարունակի լրջորեն սպառնալ մարդկանց առողջությանը: Այդ պատճառով, հրամայական է նաև այն, որ կառավարությունները, մասնավոր և հասարակական կազմակերպությունները օգնեն մեզ շտապ միջոցներ ձեռնարկել մեր երեխաների առողջությունը պաշտպանելու համար՝ նախքան կգտնվի համաձայնեցված, համապարփակ լուծում: Կարևոր է բիոմոնիթորինգի միջոցով բնակչության ռիսկի խնբերի սահմանումը և երաշխավորումն այն բանի, որ մարդիկ ավելի լավ են տեղեկացված, թե ինչպես խուսափեն սնդիկի ազդեցությունից:

Բուժաշխատողները կարող են առաջատար դեր ունենալ աշխարհը սնդիկային աղտոտվածությունից գերծ պահելու գործում: Առողջապահությունը, ներառյալ ատամնաբուժությունը, զգալիորեն նպաստում են բժշկական թափոնների գոյացմանը և, հետևաբար, կարող են խրախուսել սնդիկից գերծ այլընտրանքային միջոցների օգտագործումը՝ ուղի հարթելով արդյունաբերական ձյուղերի համար: Ավելին, բուժական հատվածը տեղեկատվության կարևոր և վստահելի աղբյուր է և, հետևաբար, հատուկ դեր ունի բնակչության որոշակի խնբերի համար ռիսկի մասին հասարակության իրազեկության բարձրացման գործում:

«Մնացեք առողջ, դադարեցրեք սնդիկի օգտագործումը» քարոզարշավը կոչ է անում.

- Փոփոխություններ մտցնել սնդիկի օգտագործման քաղաքականության մեջ, որպեսզի արագացվի սնդիկի գործածության կրծատման գործընթացը՝ համընդիանուր արգելքի միջոցով, ներգրավելով հասարակությանը: Այդ արգելքը պետք է վերաբերի հիմանխնդրին՝ բոլոր ճակատներով՝ արտադրությունից մինչև ոչնչացում, ընդ որում՝ աշխարհի բոլոր մասերում: Եվրոպան այդ ջանքերում առաջատարն է, բայց դեռևս անելիքները շատ են:
- Ուսուցանել բնակչությանը ներկա վտանգների մասին և ապահովել միջոցներով, որոնք ցույց կտան, թե ինչպես կարելի է նվազագույնի հասցնել սնդիկի ազդեցությունը նորածինների և մանկահասակ երեխաների վրա: Փաստացի ազդեցության բիոմոնիթորինգը, ներգրավելով հասարակության և առողջապահության ներկայացուցիչներին, առանցքային նշանակություն ունի կրթական և քաղաքականության քայլերի մասին տեղեկացնելու գործում:
- Խրախուսել աշխարհի հարավային երկրներին այլընտրանքային տեխնոլոգիաների փոխանցումը և ֆինանսական աջակացությունը աշխարհի հարավային երկրներին, երաշխավորել, որ նրանք ևս ի վիճակի են իրականացնել այն պաշտպանական միջոցառումները, որոնք նախաձեռնում են Եվրոպան և այլ զարգացած երկրները: